

Պ-460-06.12.2022,12.01.2023-ԱՌՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 57-րդ կետով.

57) հսկիչ գնում՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի կողմից խախտումները բացահայտելու նպատակով կատարված գնում:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել 29.1-ին հոդվածով.

«Հոդված 29.1. Հսկիչ գնումների իրականացումը

1. Դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից հսկիչ գնում կարող է իրականացվել՝ դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքով նախատեսված ստուգումների շրջանակում այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու միջոցով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

2. Հսկիչ գնումները ֆինանսավորվում են պետական բյուջեով դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համար նախատեսված միջոցների հաշվին, իսկ հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատում է կառավարությունը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ եւ 16-րդ մասերով.

«15. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիաները, բացի «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերի, կասեցվում են սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում՝ երկամյա ժամկետով:

16. Սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված կասեցման ժամկետի ավարտից հետո, մեկ տարվա ընթացքում սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներից որևէ մեկը կրկին խախտելու դեպքում լիցենզիաները դադարեցվում են լիցենզավորող մարմնի կողմից:»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 15-րդ եւ 16-րդ մասերով.

«15. Դեղատնային գործունեության լիցենզիաները, բացի «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերից, կասեցվում են սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում՝ երկամսյա ժամկետով:

16. Սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված կասեցման ժամկետի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներից որևէ մեկը կրկին խախտելու դեպքում լիցենզիաները դադարեցվում են լիցենզավորող մարմնի կողմից:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Պ-460-06.12.2022,12.01.2023-ԱռՀ-011/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ 57-րդ կետով.

57) հսկիչ գնում՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի կողմից խախտումները բացահայտելու նպատակով կատարված գնում:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել 29.1-ին հոդվածով.

«Հոդված 29.1. Հսկիչ գնումների իրականացումը

~~1. Դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից հսկիչ գնում է իրականացվում վերահսկողության ընթացքում, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու միջոցով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:~~

2. 1. Դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից հսկիչ գնում ~~կարող է~~ իրականացվել ~~է՝~~

~~1) դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթի կամ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքով նախատեսված ստուգումների շրջանակում ընթացքում առաջացած անհրաժեշտության հիման վրա, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու միջոցով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:~~

2) դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին ներկայացվող տեղեկատվության (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) հիման վրա,

3) դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից նախկինում իրականացված վերահսկողության արդյունքների տվյալների հիման վրա իրականացված վերլուծությունների արդյունքում:

3. Հսկիչ գնման արդյունքում տնտեսավարող սուբյեկտի մոտ բացահայտված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ստուգում իրականացնելու համար:

4. Հսկիչ գնումն իրականացվում է դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա: Հրամանում նշվում են տնտեսավարող սուբյեկտի (սուբյեկտների) լրիվ անունը (անունները) կամ անվանումը (անվանումները), հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, ժամկետները, վայրը (վայրերը) կամ ինտերնետային կայքը, որտեղ իրականացվելու է հսկիչ գնումը եւ հսկիչ գնում իրականացնող տեսուչի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը):

5. Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6. Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հրամանի պատճենը հսկիչ գնումն իրականացնելուց հետո հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող, ծառայություններ մատուցող եւ (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը իսկ կամ տնտեսավարող սուբյեկտի այլ ներկայացուցչի:

7. Հսկիչ գնման արդյունքներով կազմվում է դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից սահմանված արձանագրություն՝ երկու օրինակից: Հսկիչ գնման արձանագրությանը կարող են կցվել լուսանկարներ, փաստաթղթեր, էլեկտրոնային կրիչներ եւ (կամ) այլ նյութեր, որի վերաբերյալ արձանագրության մեջ կատարվում է համապատասխան նշում: Արձանագրությունն ստորագրում են հսկիչ գնում կատարող անձը եւ տնտեսավարող սուբյեկտը, կամ տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող, առաքող կամ հանձնող, ծառայություններ մատուցող եւ (կամ) դրամական հաշվարկ կատարող անձը: Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ առարկություն ունենալու դեպքում արձանագրությունն ստորագրող անձն այդ մասին նշում է

կատարում արձանագրության մեջ: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին:

8.2. Հսկիչ գնումները ֆինանսավորվում են պետական բյուջեով դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համար նախատեսված միջոցների հաշվին, իսկ հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատում է կառավարությունը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ եւ 16-րդ մասերով:

«15. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիաները, բացի «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերի, կասեցվում են սույն օրենքի ~~16-րդ հոդվածի 1-ին եւ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները~~ 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջներից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում՝ երկամսյա ժամկետով:

16. Սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված կասեցման ժամկետի ավարտից հետո, մեկ տարվա ընթացքում սույն օրենքի ~~16-րդ հոդվածի 1-ին եւ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները~~ 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջներից որևէ մեկը կրկին խախտելու դեպքում լիցենզիաները դադարեցվում են լիցենզավորող մարմնի կողմից:»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ եւ 16-րդ մասերով.

«15. Դեղատնային գործունեության լիցենզիաները, բացի «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերից, կասեցվում են սույն օրենքի ~~6-րդ հոդվածի 1-ին եւ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները~~ 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջներից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում՝ երկամսյա ժամկետով:

16. Սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված կասեցման ժամկետի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում սույն օրենքի ~~16-րդ հոդվածի 1-ին եւ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները~~ 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջներից որևէ մեկը կրկին խախտելու դեպքում լիցենզիաները դադարեցվում են լիցենզավորող մարմնի կողմից:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460-06.12.2022-ԱճՀ-011/0), <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460¹-06.12.2022-ԱճՀ-011/0), <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460²-06.12.2022-ԱճՀ-011/0), <<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460³-06.12.2022-ԱճՀ-011/0) օրենքների նախագծերի փաթեթի երկրորդ ընթերցմամբ քննարկման համար ներկայացված առաջարկների

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	<<ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460-06.12.2022-ԱճՀ-011/0) օրենքի նախագիծ	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 29.1-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 2-ից 7-րդ կետերը հանել, իսկ 2-րդ մասի 1-ին պարբերությունը և 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից հսկիչ գնում կարող է իրականացվել՝ դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով նախատեսված ստուգումների շրջանակում, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու միջոցով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:» Միաժամանակ, վերոգրյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		<p>առաջարկությամբ պայմանավորված անհրաժեշտություն կառաջանա շտկել նաև նշված հոդվածի համարակալումը:</p> <p>Հիմնավորում: Նախագծում նախատեսված կարգավորումների արդյունքում կստացվեր, որ Տեսչական մարմինը իրականացվող ստուգման արդյունքում կարող է իրականացնել հսկիչ գնում, որի արդյունքում տնտեսվարող սուբյեկտի մոտ բացահայտված խախտումները կարող էին հիմք հանդիսանալ ևս մեկ անգամ ստուգում իրականացնելու համար, ինչը հակասում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված սկզբունքներին, որոնցով արդեն իսկ հստակ նախատեսված են ստուգման հիմքերը, հաճախականությունը, ինչպես նաև օրենսդրի կողմից սահմանված են կրկնակի ստուգում և վերստուգում իրականացնելու դեպքերը:</p> <p>Առաջարկության ընդունումը կապահովի իրավական որոշակիություն և կտա տարրնթերցումներից և չարաշահումներից խուսափելու հնարավորություն: Տեսչական մարմնի կողմից հայեցողական որոշումներ կայացնելու հնարավորությունը նվազագույնի հասցնելու նպատակով առաջարկվում է Նախագիծը վերանայել՝ հնարավորություն ընձեռելով Տեսչական մարմնին իրականացնել հսկիչ գնում միայն ստուգման շրջանակում:</p>		
--	--	---	--	--

<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«ՌԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄԼԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-460- 06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներով լրացվող 15-րդ և 16-րդ մասերում «օրենքի 16-րդ հոդվածի 1-ին եւ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները» բառերը փոխարինել «օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կամ 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջներից որևէ մեկը» բառերով:</p> <p>Հիմնավորում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար ի թիվս այլնի կարող է կիրառվել նաև «տնտեսական գործունեության կասեցում» վարչական տույժը:</p> <p>ՎԻՎՕ-ի 24-րդ հոդվածի համաձայն՝ <i>տուգանային միավորը, առարկաները հատուցմամբ վերցնելը և բռնագրավումը կարող են կիրառվել ինչպես իբրև հիմնական, այնպես էլ իբրև լրացուցիչ վարչական տույժեր. սույն օրենսգրքի 23 հոդվածի առաջին մասում թվարկված մյուս վարչական տույժերը կարող են կիրառվել միայն որպես հիմնական տույժեր:</i></p> <p>Մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ:</p> <p>ՎԻՎՕ-ի 47.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է ՎԻՎՕ-ի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված «տուգանք» հիմնական վարչական տույժը կիրառել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելու կամ արտադրելու կամ պահպանելու</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
------------------------------	--	---	---------------------	---------------------

		<p>կամ բաշխելու կամ իրացնելու կամ կիրառելու համար:</p> <p>Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ Նախագծով նախատեսված կարգավորման պարագայում տնտեսվարողի նկատմամբ կիրառվելու է միաժամանակ ՎԻՎՕ-ի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով նախատեսված հիմնական վարչական տույժերը՝ այսինքն անձը նույն արարքի համար կրելու է կրկնակի պատասխանատվություն, ինչը չի բխում ՎԻՎՕ-ի 24-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներից:</p>		
ՀՀ կառավարություն	<p><<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460՝-06.12.2022-ԱռՀ-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «բացառությամբ» բառը՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում (նախադասության սկզբում) արդեն իսկ «բացառությամբ» բառը նշված է և նախադասության մեջ կրկին անգամ նշելը կարող է առաջացնել տարրնթերցման խնդիր:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<p><<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460՝-06.12.2022-ԱռՀ-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Ելնելով նախորդ առաջարկությունների տրամաբանությունից՝ առաջարկվում է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> օրենքի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2. 1-ին մասով.</p> <p><<2.1 Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում կարող է իրականացվել նաև հսկիչ գնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:>>:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՍՊԸ-ի ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460-06.12.2022-Առ-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Ելնելով նախորդ առաջարկությունների տրամաբանությունից՝ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «տրամադրողի տվյալները» բառերից հետո լրացնել «, դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում՝ հսկիչ գնում կատարելու անհրաժեշտության պարագայում՝ նաև հսկիչ գնում իրականացնելու դեպքը (դեպքերը), վայրը (համայնքը, Երևանում՝ վարչական շրջանը), ինչպես նաև նպատակը:» բառերով, իսկ «մասնակցել ստուգմանը» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված՝ դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների ընթացքում կատարվող հսկիչ գնումների:» բառերը:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՍՊԸ-ի ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460-06.12.2022-Առ-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Ելնելով նախորդ առաջարկությունների տրամաբանությունից՝ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն մասով սահմանվող սահմանափակումը չի տարածվում դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների ընթացքում իրականացվող հսկիչ գնման դեպքերի վրա:»:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՍՊԸ-ի ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p>	<p>Ելնելով նախորդ առաջարկությունների տրամաբանությունից՝ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ կերպ .</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

	<p>ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460-06.12.2022-Ա՛՛-011/0) օրենքի նախագիծ</p>	<p><<1. Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր, ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը, իսկ դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում հսկիչ գնում իրականացնելու դեպքում՝ հսկիչ գնում կատարելու օրը: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը: Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում հսկիչ գնում իրականացնելու դեպքում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարվում է հսկիչ գնում կատարելուց հետո՝ անմիջապես: Տնտեսավարող սուբյեկտի ստուգման մատյանը պարունակում է տեղեկություններ՝ տարվա ընթացքում կատարվող ստուգումների, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի, ստուգող պաշտոնատար անձանց կազմի, ստուգման հարցերի, նպատակի, ժամկետների, դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում իրականացված հսկիչ գնման պարագայում՝ նաև կատարված հսկիչ գնումների մասին:>>:</p>		
<p><< կառավարություն</p>	<p><<<ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՆՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460-06.12.2022-Ա՛՛-011/0)</p>	<p>Ելնելով նախորդ առաջարկությունների տրամաբանությունից՝ առաջարկվում է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում <<պատասխանների>> բառից հետո լրացնել <<, դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

	011/0) օրենքի նախագիծ	իրականացված հսկիչ գնման պարագայում՝ դրա արդյունքների,>> բառերով:		
ՀՀ կառավարություն	<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՆՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460՝-06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ	Ելնելով նախորդ առաջարկությունների տրամաբանությունից՝ առաջարկվում է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնելնոր 8.1 մասով հետևյալ բովանդակությամբ. <<8.1) Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների ընթացքում հսկիչ գնում կատարելու դեպքում՝ հսկիչ գնման արդյունքները.>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՆՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460՝-06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ	Ելնելով նախորդ առաջարկությունների տրամաբանությունից՝ առաջարկվում է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել ժբ) –րդ պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ. <<ժբ) Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում իրականացնել հսկիչ գնում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:
Նարեկ Զեյնալյան	<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՆՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460՝-06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ	Ելնելով վերը նշված առաջարկությունների ընդունումից նախագծի վերնագիրը փոխել և դարձնել <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՆՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> օրենքի նախագիծ	Ընդունվել է:	Ընդունվել է:

Նարեկ Ջեյնայյան	<p><<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-460³-06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Ենելով վերը նշված առաջարկությունների ընդունումից՝ այն հանգամանքից, որ առաջին ընթերցումից հետո, որոշակի դրույթներ <<Դեղերի մասին>> օրենքի նախագծից տեղափոխվեցին <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> օրենքի նախագիծ առաջարկում եմ այդ նախագծում ավելացնել անցումային դրույթ հետևյալ նախադասությամբ՝ << Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:>></p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<p><<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460³-06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 47. 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել <<կամ իրացնելը>> բառերը:</p>	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
ՀՀ կառավարություն	<p><<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Պ-460³-06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածի <<1-ին>> բառը փոխարինել <<1-ին,>> բառով:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-460³- 06.12.2022-Առ<-011/0) օրենքի նախագիծ</p>	<p>Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ առաջարկվում է բարձրացնել տուգանքի չափերը (այլ հիմնավորումները բացակայում են), ինչպես նաև նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ ներկայացված չեն, որևէ հիմնավորումներ օրենսգրքի սույն ոլորտում գործող ներկայիս սանկցիաների ոչ արդյունավետ լինելու և վարչական պատասխանատվության նպատակներին չճառայելու մասին, ինչպես նաև ներկայացված չեն, որևէ վիճակագրություններ և վերլուծություններ սույն մասով:</p>	<p>Ընդունվել է: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆ առավել խիստ կետերով կներկայացվի հանձնաժողովի նիստում քննարկման ժամանակ: Կարճ հիմնավորում: Դեղերի շուկայում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրացվող կեղծ, չգրանցված դեղերը, դրանք բարձր արժեք ունեցող, հիմնականում կաղցքերի բուժման հետ կապված օնկոլոգիական դեղերն են: Տուգանքի չափերը բարձրացնելու հիմնական նպատակն այն է, որ գործող տուգանքի չափերը թանկարժեք դեղերի դեպքում շատ ցածր են լինում՝ համեմատ դեղերի արժեքի: Տնտեսվարողի համար նախընտրելի է դառնում վճարել տուգանքը և շարունակել կեղծ, չգրանցված դեղեր վաճառելը: Բարձրացնելով տուգանքի չափերը, տնտեսվարողի կրած վնասը կլինի շոշափելի և արդեն ձեռնտու չի լինի կեղծ, չգրանցված դեղեր վաճառելը:</p>	
------------------------------	--	--	---	--